ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Առաջին աշխարհամարտի նախօրեին արդեն կարծես թե մոռացության տրված հայկական հարցը կրկին ասպարեզ հանվեց հիմնականում Ռուսաստանի ջանքերով և կոնկրետ բովանդակություն հաղորդվեց 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով: Թվում էր, թե այլևս ոչինչ չի կարող խանգարել հարցի լուծմանը, սակայն վրա հասած պատերազմը ի չիք դարձրեց հարցի խաղաղ ճանապարհով լուծելու հայ ժողովրդի վերջին իղձերը: Թուրք պատմաբան Տ.Աքչամի վկայությամբ թուրքերի ազգային առանձնահատկությունը պատճառ դարձավ «թաբու» դնել Հայկական Հարցի վրա:[1] Օգտվելով պատերազմական դրությունից, երիտթուրք կառավարիչները որոշեցին Հայկական Հարցը լուծել թուրքական եղանակով՝ բնաջնջելով մի ամբողջ ժողովուրդ: Քաղաքակիրթ Եվրոպայի աչքի առաջ իրականացվեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը իր բոլոր դրսևորումներով (բնաջնջում, բռնագաղթ և այլն): Օսմանյան իշխանության հակահայկական քաղաքականության շարունակությունն էր թուրքական զորքերի դեպի Անդրկովկաս կատարած արշավանքը 1918թ. գարնանը և Բաթումի ծանր պայմանագրի պարտադրումը հայերին: Հայաստանի Հանրապետությունը ստեղծվեց շուրջ 12 հազ. քառ. կմ. տարածքի վրա՝ լցված գաղթականներով և սովահար մարդկանցով:

Առաջին աշխարհամարտի ավարտը և պատերազմում Թուրքիայի պարտությունը, հայությանը Հայկական Հարցի արդարացի լուծման նոր հույսեր ներշնչեցին: Պատերազմում հաղթած Անտանտի տերությունների պատվիրակությունները սկսեցին հավաքվել Փարիզում՝ վերածնելու աշխարհի քարտեզը, վճռելու ժողովուրդների ճակատագիրը: Հայ գործիչները ևս իրենց հայացքը ուղղեցին Փարիզին:

Հայաստանի կառավարությունը 1918թ. դեկտեմբերի 5-ին հաստատեց Հայաստանի Հանրապետության Փարիզ մեկնող պատվիրակության կազմը, որի մեջ մտան Ա.Ահարոնյանը (նախագահ), Հ.Օհանջանյանը և Մ.Պապաջանյանը: Կառավարությունը միաժամանակ հաստատեց պետական պաշտոնական

[1] Т.Акчам, Турецкое национальное "Я" и Армянский вопрос, Москва, 1995, стр. 141-142.

պատվիրակության գործունեության հրահանգը: Որոշվեց, որ Փարիզի վեհաժողովում Հայաստանի պատվիրակությունը խնդիր է դնելու կազմել մեկ պետություն և ստեղծել Միացյալ Հայաստան:

Բացի պետական պատվիրակությունից, Փարիզում էր գտնվում նաև Հայոց Ազգային պատվիրակությունը Պողոս Նուբարի գլխավորությամբ, որին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ 5-րդը հրահանգ էր տվել կառավարական պատվիրակության հետ գործել համախոհ և միասնաբար:[2]

Ընդ որում, ստեղծվելիք միացյալ պետությունը ընդգրկելու էր Արևելյան Հայաստանի բոլոր տարածքները, անկախ այն բանից, թե դրանք Հայաստանի Հանրապետության տարածքում էին, թե ոչ և Արևմտյան Հայաստանից Վանի, Բաղեշի, Տիգրանակերտի, Խարբերդի, Սեբաստիայի, Կարինի, Տրապիզոնի վիլայեթները և ունենալու էր ելք դեպի ծով:[3]

Սակայն երկու դիվանագիտական պատվիրակություններին էլ չէր սպասվում դյուրին աշխատանք, քանի որ Անտանտի երկրների ղեկավարների «հայանպաստ» հայտարարությունները, մեր համոզմամբ, առաջ էին բերել մի այնպիսի հակասություններ, որից դուրս գալու համար շատ ճիգեր էին պետք:

Բայց և այնպես Փարիզում ճանաչվեց հայ ժողովրդի պատմական իրավունքն իր նախնիների հայրենիքի նկատմամբ, աշխարհը պաշտոնապես ընդունեց հայ ժողովրդի Արևմտյան Հայաստանում հայկական անկախ պետականության ստեղծելու իրավունքը:

Չպետք է մոռանալ, որ դեռ 1917թ. դեկտեմբերի 29-ին Խորհրդային Ռուսաստանը «Թուրքահայաստանի մասին» դեկրետով հայ ժողովրդին հայտարարում էր, որ «Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը ընդհուպ մինչև լիակատար անկախություն»:[4]

Այդ դեկրետով բոլշևիկյան Ռուսաստանը պաշտոնապես ճանաչում էր հայ ժողովրդի պատմական իրավունքը Արևմտյան Հայաստանում, այն Հայկական Հարցի լուծման ճանապարհին հաղթաթղթի դեր կարող էր կատարել, բայց այդպես չեղավ:

---

[2] Հայոց պատմություն (Նյութերի ժողովածու), Երևան, 1993, էջ 164:

[3] Նույն տեղում, էջ 121:

[4] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 418-419:

Հայ ժողովրդի ճակատագիրը միջազգային քաղաքական ուժերի ձեռքին փաստորեն դարձել էր մի գործիք, որն ինչպես հարմար էր իրենց, այնպես էլ օգտագործում էին: Չնայած այս հանգամանքը հասկանում էին հայկական պատվիրակությունների անդամները, բայց այլ ելք չունեին, քան նրանց հավատալը:

Իսկ իրադարձությունները ընթացան այլ հունով:

1920թ. Սան-Ռեմոյի կոնֆերանսում որոշվեց, որ անկախ Հայաստան կստեղծվի հայկական ոչ թե վեց, այլ չորս վիլայեթների սահմաններում: Հույս հայտնվեց, որ Ամերիկան կվերցնի Հայաստանի մանդատը:

Սան-Ռեմոյի կոնֆերանսը հայ գործիչներին համոզեց, որ դաշնակից տերությունները բացի խոստումներ տալուց, իրարամերժ կարծիքներ հայտնելուց, որևէ մտադրություն չունեին գործնական օգնություն կազմակերպել Հայաստանին՝ ընդդեմ Թուրքիայի: Այնուամենայնիվ, նրանք չկարողացան ազատվել արևմտյան տերությունների քաղաքականության նկատմամբ լավատեսությունից:

Հենց Սան-Ռեմոյի գայթակղիչ խոստումներն ու ճառերը ոգևորեցին հայ դիվանագետներին ու քաղաքական գործիչներին և նրանք Մոսկվայում չկարողացան անել այն, ինչը պետք էր հանրապետությանն ու ժողովրդին: Այս մասին առավել պատկերավոր է ասել Լևոն Շանթի պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանը իր հուշերում՝ ընդգծելով, «որ Խորհրդային Ռուսաստանը շատ բան կարող էր անել Հայաստանի Հանրապետության համար»:[5]

Արևմտյան տերությունների խոստումները, կարծես թե, մթագնել էր բոլորի հեռատեսությունը, ովքեր կանգնած էին Հայաստանի դիվանագիտական ու քաղաքական ղեկի առաջ:

Արևմտյան դիվանագիտության երկրորդ քայլն Հայկական Հարցում 1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի հաշտության պայմանագիրն էր: Պայմանագրի 6-րդ բաժինը վերաբերում էր Հայաստանին, 88-րդ հոդվածով Թուրքիան Հայաստանին ճանաչում էր որպես անկախ պետություն, 89-րդ հոդվածով Թուրքիան և Հայաստանը, ինչպես և բարձր պայմանավորվող կողմերը համաձայնվում էին Երզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանազատումը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշմանը և ընդունել ինչպես որոշումը,

---

[5] Թորգոմ Վեհապետյան, Նոր սերունդը խռովության նոխազ, Բեյրութ, 1966, էջ 25:

այնպես էլ այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ:[6]

Այս հոդվածի գայթակղությունն ու ոգևորիչ բովանդակությունն, իհարկե, կշփոթեցներ նույնիսկ ամենափորձված դիվանագետներին ու քաղաքական գործիչներին: Չէ որ Հայաստանին տրվում էր շուրջ 100 հազ.քառ.կմ տարածք, դրան գումարած Հայաստանի Հանրապետության տարածքները: Սահմանագծումը Ադրբեջանի և Վրաստանի հետ պետք է լուծվեր անմիջական բանակցությունների միջոցով:

Սակայն պայմանագրի կնքումից շատ կարճ ժամանակ անց քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա, իսկ Ազգերի լիգայի խորհուրդը ձայների բացարձակ մեծամասնությամբ (29-ից 21-ը) մերժեց Հայաստանին Ազգերի լիգայի անդամ ընդունելու հարցը:

Այդ օրերին կային նաև սթափ մտածողներ, որոնք գտնում էին, որ որքան շուտ համաձայնություն ձեռք բերվի Խորհրդային Ռուսաստանի հետ, այնքան դրական կլուծվի Հայկական Հարցը:

Հենց այդ է վկայում 1920թ. հոկտեմբերի 28-ին Լեգրանի հետ ստորագրած համաձայնությունը, ուր նախատեսվում էր Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սուվերեն իրավունքը: Սակայն այս համաձայնագրի ստորագրման պահին շարունակվում էր թուրքական զորքերի արշավանքը Հայաստան:

Թուրքերը կռահում էին, որ Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունները հեռանկարային են և կարող էր իրենց նպատակներին խանգարել, սակայն նրանք նաև գիտակցում էին, որ Հայաստանի կառավարող շրջանները դեռևս իրենց հույսերը կապում է Անտանտի հետ: Կարաբեքիրի շտապողականության պատճառը պարզ էր. նա ավելի հեռատես էր, քան հայ կառավարող շրջանները:

Հոկտեմբերի 30-ին թուրքերը գրավեցին Կարսը, նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլը, որից հետո դեպի Երևան ճանապարհը բաց էր:

Նույնիսկ այս պայմաններում Հայաստանի կառավարող շրջանների վճռական շրջադարձ տեղի չունեցավ. շարունակում էր հավատը Արևմուտքի

---

[6] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքական փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 676:

նկատմամբ: Եվ զարմանալի չէ, որ 1920թ. նոյեմբերի 19-ին Ալ.Խատիսյանը մեկնեց Թբիլիսի դաշնակիցներից օգնություն հայցելու:

Այդ մասին Խատիսյանը գրել է. «Կարևոր էր միայն մեկ բան, ստանալ օնություն դիվանագիտական կամ քաղաքական: Բայց ոչ մեկը, ոչ էլ մյուսը չեղավ»:[7] Անգլիական դիվանագետ Ստոքսի հարցումին լորդ Քերզոնը պատասխանել էր. հայերին խորհուրդ տալ՝ ավելի լավ է հաշտվել թուրքերի հետ, քան թե խորհուրդների հետ:

Հայաստանի առաջին Հանրապետության կարճատև պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ տարիների հայ ղեկավար շրջանները իրատես չէին, չէին կարողանում կողմնորոշվել իրադարձությունների հորձանոտում, դրանց շրջադարձային պահերին:

Համոզիչ չեն նաև նրանց թե այն ժամանակվա և թե հետագա տարիների արդարացումները, քանի որ կարելի է սխալվել մի, բայց ոչ ամեն անգամ: Ճակատագրական եղան մեր ժողովրդի համար հատկապես 1920թ. վերջին ամիսները, երբ ի տարբերություն 1918թ. գարնանը, հույց հանրապետությունը անկարող եղավ կազմակերպված դիմադրություն ցույց տալ թշնամուն: Հայաստանն այդ պատերազմը տանուլ էր տվել մինչև պատերազմի սկսելը, տանուլ էր տվել դիվանագիտական հողի վրա: Պատերազմը սկսվեց և պարզ դարձավ, որ հանրապետությունը մենակ է, չունի բարեկամ, չունի դաշնակից: Նա խաբված էր ու լքված բոլորի կողմից:

Այսպիսով, առաջին հանրապետության տարիներին Հայկական Հարցը ունեցավ մեծ հույսերի, սպասումների, վարդագույն երազների, դառը հիասթափությունների, ոգու անկման ու ստորացման պահեր: Մի կողմից առերևույթ հաջողություններ հանրապետության միջազգային ճանաչում, ներքին դրության փոքրիշատե ամրապնդում, թաթար-բոլշևիկյան խռովությունների ճնշում, Միացյալ Հայաստան խոստացող Սևրի պայմանագրի ստորագրում, մյուս կողմից անհավասար պատերազմ դարավոր թշնամու դեմ, ծանր պարտություն, մարդկային ու տարածքային մեծ կորուստներ և ի վերջո հանրապետության կործանում:

---

[7] Ալ.Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 61: